

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԻ ԳՈՐԾԵՐԸ

Պարսկահայերի մեծ և յայտնի մասը կենտրոնացած է Ատրպատականում: Հայերի թիւը Ատրպատականում հաշոււմ են մօտաւորապէս 26 հազար: Եւ այդ բոլոր հայերը, որպէս փոքրամեքներ, ցլուած են այդ ընդարձակ նահանգի զանազան կողմերում: Այստեղ առաջնորդը ներկայացնում է ոչ միայն հոգեւոր, այլև աշխարհիկ պեռ. հայերի ընդհանուր ներկայացուցիչ և բոլոր գործերի ղեկավար: Անշուշտ ծանր և պատասխանատու է այդ գերը:

Ահա Սայմաստը, Ատրպատականի աչքը. այնտեղ հայերը հիւժւում, քամւում են. պարսիկ պաշտօնեաները, ինչպէս սարփարաստը, հէքիմը և այլն, կեղեքում, հարստահարում են հայերին, ծեծում, տուգանք առնում անիրաւացի կերպով և դառնացնում ժողովրդի կեանքը: Թեմակալ առաջնորդը պիտի խիստ կերպով պաշտպանի իր ժողովրդին և կուր պաշտօնեաների գէմ: Քիւրդերի հրոսակախմբերը անարգել և յաճախակի յարձակում են գիւղերի վրայ, խանդարում ժողովրդի հանգիստը, աւերում և տապատակում են: Առաջնորդը պիտի միջոցներ ձեռք առնի այդ աւարառութիւնների առաջն առնելու համար: Հայ աղգարնակութիւնը տգէտ է, անհրաժեշտ են տարրական դպրոցներ, այդ մասին էլ յայտնի չափով պիտի մտածէ առաջնորդը:

Ահա Ղարադաղը, Ատրպատականի հայաշատ գաւառներից մէկը: Այնտեղ հայերը տանջւում, չարչարւում են թուրք գիւղատէրերից, հայի սեփական կալուածները և գիւղերը խլում են բէգերը և տիրում: Թեմակալ առաջնորդը պիտի կարողանայ պաշտպանել հայ ժողովրդի իրաւունքները, հարուածել գիւ-

դատէր բէգերին, զիմադրել և թոյլ չը տալ, որ հայերը զրկուեն իրանց սեփականութիւններէց: Ժողովուրդը միանգամայն տգէտ է, նա թշուառ է, հարստահարուած: Այս բոլոր պահանջներին և կարիքներին էլ բաւարար կերպով հոգացում տալու համար պիտի առաջնորդը որոշ չափով աջակցի և մղում տայ, թէև ամեն մի կարող անհատի պարտականութիւնն է այդ:

Ահա պարսկական Բարեգտաւոր, Բարանդուզ, Սոււչուրազ, Սուլդուզ և Միանդուար գաւառամասերը, Ատրպատականի ամենախեղճ ու կրակ անկիւնը: Այնտեղ, այդ անկիւնում հարստահարութիւնը քրոնիկական ընտրութիւն է ստացել: Հայը թշուառ է և խեղճ, բառի ընդարձակ մաքրով ընդունած: Հայերը միանգամայն մոռացել են իրանց մայրենի լեզուն, խօսում են թուրքերէն և քիւրդերէն: Հայը օտարացել է և կորցրել իր ազգային առանձնայատկութիւնները, նա կանգնած է կորստի անխուսափելի ճանապարհի վրայ: Անհրաժեշտ է սովորեցնել նրան իր մայրենի լեզուն և թոյլ չը տալ, որ նա կորչի: Այդ պարտականութիւնը մեծ մասով ընկնում է Ատրպատականի առաջնորդի վրայ: Չը կան աշխտեղ քահանաներ, նորածին երեխաները չաբաթներով անկնունք են մնում, մեռելները օրերով անթաղ, և ժողովուրդը առանց քահանայի մուսիլը տանում թաղում է: Պէտք է քահանաներ տալ ժողովրդին: Այդ պարտականութիւնն էլ ամբողջովին ընկնում է թեմակալ առաջնորդի վրայ: Թուրքը և քիւրդը բռնաբարում են հայ կանանց, պղծում նրա ընտանեկան սրբութիւնը, փախցնում տանում հայ աղջիկներին և անարգում նրանց պատիւը: Առաջնորդը պիտի խիստ կերպով բարձրացնի իր բողոքող ձայնը և պաշտպանի ժողովրդի պատիւը: Այստեղ, ինչպէս և խոյ գաւառում, հայերը շատ են ջրբուած. մի գիւղում կան 2 տուն, երկրորդ գիւղում չորս տուն, չորրորդում 10 հայրն և հէնց գլխաւորապէս էլ այդ ջրբուածութիւնը արագացնում է հայերի անկումը: Առաջնորդը նախաձեռնողի գեր պէտք է ձեռք առնի և աշխատի հաւաքել նրանց, կենտրոնացնել մի քանի տեղերում:

Ահա և Ուրմին: Այնտեղ բուն են գրել մի շարք օտար դաւանութիւնների ներկայացուցիչներ, որոնք ամեն կերպ աշխատում են խլել հային իր եկեղեցուց: Առաջնորդը պէտք է մտածի այդ մասին ամենից շատ, պէտք է միջոցներ ձեռք առնի և թոյլ չը տայ, որ հայը հեռանայ իր եկեղեցուց:

Ահա արքան պահանջներ և կարիքներ ունի Ատրպատականի թեմը, ահա ինչպիսի գործունէութեան լայն ասպարէզ ունի առաջնորդը, և որքան պատասխանատու է այդ պաշտօնը:

Բայց այդ չէ գեռ բոլորը, Թուրքիզումն է մնում Ատրպա-

տականի թեմակալ առաջնորդը, այնտեղ են լինում՝ նաև օտար պետութիւնների ներկայացուցիչ-հիւպատոսները: Առաջնորդը իբրև հայերի ներկայացուցիչ պէտք է յարաբերուի թիւններ պահպանի պարսից թագաժառանգի, զանազան պաշտօնեաների և հիւպատոսների հետ: Եթէ առաջնորդը զիրք և հեղինակութիւն չ'ունի պարսիկ պաշտօնեաների շրջանում և չի ներկայացնում զօրեղ ոյժ, անպայման նա անկախող կը լինի մի շօշափելի գործ կատարել և օգտակար լինել թեմին:

Հերիք է որ մի պարսիկ պաշտօնեայ ընդհարուի առաջնորդի հետ և զգայ նրա թուլութիւնը, ձեռք առնելով պարսկական ամենանուրը խորամանկութիւնները՝ նա կ'աշխատի առաջնորդի զիրքը խախտել, դրել նրա պրեստիժը բարձր պաշտօնեաների առջև և տապալել նրան: Իսկ այդքանից յետոյ առաջնորդի թիւները կ'որոտուելով՝ հնարաւորութիւն չի ունենայ աղատօրէն գործելու, ամեն տապալէզում, ամեն տեղ խռնդոսներ կը յարուցանեն նրա առաջ: Առաջնորդը պէտք է լինի հմուտ, վարչական ընդունակութիւններով օժտուած անձնաւորութիւն, լաւ ծանօթ պարսկական յարաբերութիւններին. հակառակ դէպքում նա անկախող կը լինի իր զիրքը պահպանել: Պարսկական կեանքը, ինքը պարսկացոսանցին բազմազան և վերին աստիճանի նուրը խորամանկութիւնների մի հիւսուածք է. այդ հիւսուածքի մէջ մտնողն էլ պիտի անհրաժեշտօրէն ունենայ նուրբ քաղաքագիտութիւն, պիտի կարողանայ հասկանալ այդ կեանքը:

Ահա այս, ինչպէս և վերեր առաջ բերուած լուրջ հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ ասում ենք, որ Ատրպատականի թեմը ծանր և պատասխանատու է: Վերջին 50 տարուայ տարեգրութեան մէջ յիշուած է միայն Ստեփաննոս եպ. Մխիթարեանի անունը, որը կարողացել է զօրեղ զիրք ստեղծել առաջնորդի համար, բարձր պահել առաջնորդարանի հեղինակութիւնը պարսիկ պաշտօնեաների առաջ: Նա ունեցել է խիստ և ուժեղ բնաւորութիւն և զօրեղ կամք, և ինչպէս պատմում են, պարսիկ պաշտօնեաները դողում, տարսալում էին նրանից: Գաւառացին մեծ յափշտակութեամբ և հիացմունքով է յիշում նրա անունը. նա գաւառացու համար եղել է զօրեղ պահապան, թէև այս էլ պիտի ասել, որ նա ունեցել է շատ հակակրեկի կողմեր, մանաւանդ որպէս մարդ:

Ատրպատականի թեմը ամենայն իրաւամբ համարւում է «փորձաքար»: Եւ իսկապէս շատ առաջնորդներ մեծ զարբով, ահագին ոգևորութեամբ մտել են Ատրպատական և հէնց առաջին քայլից զգացել են իրանց անպատրաստակաւութիւնը և թուլութիւնը, դէմ են առել ասեա մի ժայռի: Այսպէս է ահա

Ատրպատականի թեմը: Երբ խօսում են դրսի մի առաջնորդի մասին, դովում են նրան, թեում նրա ընդունակութիւնները, հիանում նրա գործերով և աջողութիւններով, թաւրիզցին՝ հեղնական ժպիտը երեսին՝ առարկում է. «էհ, այդ ոչինչ, հապա թող գայ Ատրպատական, թող դայ, տեսնենք նոյն զիբըր այստեղ էլ կը ստեղծի և կ'ունենայ այն յաջողութիւնները»:

Ատրպատականի թեմը, ինչպէս զիտէք, ստացաւ ընտրողական ժողովրդական իրաւունք, և ձայների հասարակ մեծամասնութեամբ առաջնորդ ընտրուեց Եղիշէ վարդապետ Մուրադեանը: Արդէն լրացել է ներկայ առաջնորդի երկու տարուայ պաշտօնավարութիւնը, դեռ մի երկու ամիս էլ անցել է, եսկ սյդ քիչ ժամանակամիջոց չէ նրան լաւ ճանաչելու համար: Ահա այդ երկու տարուայ գործունէութեան մասին կ'աշխատեմ տալ մի ամիսի տեղեկութիւն:

Ի՞նչ է ասում այդ գործունէութիւնը:

Այսինքր դաւառից: Գաւառը, որը պէտք է լինի ամեն մի առաջնորդի հոգեդրութեան առաջին և ամենալուրջ առարկան, միշտ էլ մոռացում է, և առաջնորդը ընկնում է Թաւրիզ, խըր-ւում է տեղական գործերի մէջ և միանգամայն մոռացութեան տալիս իր թեմի ամենապիտաւոր մասը՝ Նոյն այդ բանը պատահեց և ներկայ առաջնորդի հետ: Նա մինչև այժմ, այդ երկու տարուայ ընթացքում այցելել է միմիայն Սալմաստ, իսկ ինչ է արել գէթ Սալմաստի համար: Գրեթէ ոչ մի օգուտ, բացի մի շարք վեհանքից: Եղիշէ վարդապետը իր սովորութեան համաձայն Սալմաստում էլ տալիս է մի շարք խոստումներ, վերուն ծրագիրներ է առաջարկում՝ ժողովրդին, արծարծում է գիւղատնտեսական կենտրոնական դպրոցի միտքը, փայլուն յոյսեր է տալիս և խոստանում է չուտով մի յայտնի դումար հասցնել այդ դպրոցի համար: Ժողովուրդը միամտաբար հաւատում է իր առաջնորդին, եղիտում է, և նոյնիսկ տալիս են ձրիտաբար այն հողը, որի վրայ պիտի կառուցուէր առաջնորդի երեսկայած դպրոցը: Առաջնորդ Մուրադեանը հետանում է Սալմաստից՝ թողնելով ժողովրդին փայլուն յոյսերի աշխարհում: Խեղճերը մինչև այսօր էլ սպասում են...

Հայերը մեծ յոյս ունէին, որ առաջնորդը տեսնելով իրանց թշուառ, յուսահատական վիճակը, միջոցներ ձեռք կ'առնի զրուակ և սաճահարկ սարփորաստին, և ընդհանրապէս պարսիկ պաշտօնեաներին: Նա ոչ միայն այդ չէ անում, այլ իր բռնած սխալ և անտալիտ զիբըրով աւելի է երես տալիս նրանց, որոնք յետոյ աւելի ազատ և համարձակ են դառնում իրանց կողուպուտների և հարստահարութիւնների մէջ:

Այս թւի գարնան սկզբներում այնտեղ ուղարկուեց Ընձակ վարդապետը որպէս յաջորդ: Հէնց առաջին օրերից ցոյց է տալիս նա, որ կարող է վարել իր ստանձնած ծանր պաշտօնը. նա մնում է իր պաշտօնում ոչ երկար, միայն վեց-եօթ ամիս: Նրա այդքան պաշտօնավարութեան գործունէութիւնը եղել է ընդհանրապէս դոճացույիչ և զբաղան: Ընձակ վարդապետը եռանդուն գործիչ է. նա ունի գործելու բուռն ցանկութիւն և նա կարող էր ապագայում անպայման օգտակար լինել Սալմաստին: Նա ամենախիստ և ուժեղ կերպով դիմադրում է սարփարաստին և միանգամայն չէղբայնում նրան: Հարստահարութիւնները գրեթէ բոլորովին դադարում են, կտրւում է սարփարաստի մշտական արդիւնքի աղբիւրը: Կատաղում է սարփարաստը, միջոցներ է ձեռք առնում նրան հեռացնելու Սալմաստից. նա կեղծ հեռաղիր է կազմում հայ ժողովրդի կողմից և յայտնում Թեհրան, թէ հայերը դժգոհ են յաջորդից և խնդրում են հեռացնել Այդ մասին պաշտօնապէս հաղորդւում է Թաւրիզ և Էջմիածին. վեհ. Կաթողիկոսից հեռագիր է ստացւում, որով կանչւում է Ընձակ վարդապետը: Հեռագրի կեղծութիւնը յետոյ իհարկէ պարզւում է, կասկած է յայտնւում նոյնիսկ Թեհրանից, ահա այդ ժամանակ թէև կարելի էր պաշտպանել յաջորդին, քննութիւն նշանակել, բայց առաջնորդ Մուրադեանը լռեց, չը պաշտպանեց նրան, կամ աւելի ճիշտ՝ չը կարողացաւ պաշտպանել, և Ընձակը հեռացաւ Սալմաստից *):

Նորից սկսւում են կեղեքումները և հարստահարութիւնները էլ աւելի խիստ և մեծ չափերով. բացւում է տուգանքների դուռը սարփարաստի առաջ, որը յաճախակի տակ է՝ «էն վարդապետ 300 թումանի մլաա տուեց ինձ, էդ գումարը տուկոսով է արուած ձեզ մօտ, ժողովուրդ, հիմայ պիտի առնեմ, էն էլ տոկոսը հետը»: Եւ նա սկսում է իր սովորական կեղեքումը:

Երբ գտնւում են ժողովրդի բարօրութեանը նախանձախնդիր անհատներ, որոնք դպրոցներ են բանում այս կամ այն գիւղում, ուսուցիչներ նշանակում և զարկ տալիս լուսաւորութեան գործին, մեր առաջնորդը իր բարձրութիւնից հրամայում և ձգտում է արգելք դնել նրանց առաջ: Ահա Սարամիւրիկ գիւղը. ժողովուրդը միանգամայն ագէտ է, հարկաւոր է կրթութիւն, պէտք

*) Հէնց սկզբից առաջնորդը ընդհարուեց քարգուղարի հետ, այդ էլ շնորհիւ անտակտութեան. նա միշտ էլ խօսում է «պղտժենիսցից», մի բան, որ Պարսկաստանում գոյութիւն չ'ունի:

է բանալ ուսումնարան. մտածել է, մտքովն անգամ անցել է այդ գիւղը: Անտարակոյս ոչ, բայց մի պարոն, Սալմաստի ժողովրդի հաւանութեամբ կարգեց այնտեղ մի ուսուցիչ: Ժողովուրդը գիտէ՞ր ինչքան ոռճիկ տուեց ուսուցչին, միմիայն 20 թուման. նոյնքան էլ տուեց այդ պարոնը իր մօտ եղած դումարից, այդ խուլ անկիւնը ունեցաւ իր դպրոցը: Յանցանք գործեց այդ պարոնը: Ահա և ի՞նչ դաւառը, գիտէ՞ս առաջնորդը արդեօք, քանի հայաբնակ գիւղեր կան այնտեղ և որտեղ դպրոցներ կան, մտածել է այդ դպրոցների մասին. իհարկէ ոչ: Մեղք են արել ուրեմն այն մարդիկ, որոնք ի՞նչ քաղաքում և Սէյդաւար գիւղում ուսուցիչներ են նշանակել: Ահա Փայաջուկը: Այնտեղ կար տեղացի մի ուսուցիչ, առաջնորդը քաջ տուեց և բերեց նրան Թաւրիդ, առանց նրա տեղը մէկին կարգելու. բայց գտնուեցին մարդիկ, որոնք այնտեղ կանոնաւոր ուսուցիչներ նշանակեցին, միթէ յանցանք գործեցին նրանք:

Ահա պարսկական Քիւրդստանը, այդ մի բուն թշուառ հայերը. ի՞նչ է արել նրանց վերաբերմամբ առաջնորդը, մտածել է դէթ նրանց մասին: Քահանաներ տուել է առաջնորդը, — ոչ: Գիտենք, որ հէնց այս վերջին ժամանակներս հայ աղջիկ են փախցրել բռնութեամբ, և պաշտօնապէս այդ մասին յայտնուել է առաջնորդին, բայց նա ի՞նչ արեց: Այսպիսի դէպքերում չի մտաբերում առաջնորդը այդ թշուառ, հարստահարուած հայերին, իսկ «պողի» հաւաքելիս չի մոռանում նրանց:

Ղարադաղի վերաբերմամբ կան կալուածական մի շարք խնդիրներ. թուրք բէգերը խլում են Քէյվանը, աշխատում են տիրել հայերի այս և այն գիւղերին. մտածել է այդ խնդիրների մասին մեր առաջնորդը, միջոցներ ձեռք առել է զինազրկու համար:

Իսկ ի՞նչ է ներկայացնում նրա գործունէութիւնը Թաւրիդում: Ներկայ առաջնորդ Մուրադեանին ամենայն իրաւամբ կարելի է կոչել Թաւրիդի առաջնորդ: Նա հէնց սկզբից խրուեց Թաւրիդի բոլոր հասարակական հարցերի մէջ, ամեն տեղ մտաւ և մոռացաւ իրանից մի քանի տասնեակ աղաջ (մզոն) հեռաւորութեան վրայ ապրող և հեծող ժողովրդին: Նա գրեթէ միաժամանակ արժարծեց մի քանի խնդիրներ, ինչպէս՝ մատիցիա հիմնել, Կենտրոնական դպրոց, լրագիր և այլն:

Մատիցիան աջող ընդունելութիւն չը գտաւ ժողովրդի կողմից և չը տարածուեց ամբողջ թեմում, թէև ընդունում եւ, որ օգտակար ձեռնարկութիւն է: Կենտրոնական դպրոցը, եղիչ վարդապետի ծրագրած և երկակայած Կենտրոնական դպրոցը, ինչպէս էլի առիթ եւ ունեցել այս էջերում գրել, պահանջում է մեծ

դրամագլուխ: Եղիշէ վարդապետի երեակայած դպրոցը ունենալու է մասնագիտական դասադան բաժիններ, օրինակ՝ դեղատոնտեսութիւն, անխնիկա հայրն Այդպիսի մասնագիտական բաժիններով դպրոցը առնուադն ունենալու է 80—100, 000 ր., իսկ ինչ կար Կենտրոնական դպրոցի անունով, միմիայն 30—35000 ր., այդ էլ տուին չէնքին: Եթէ Եղիշէ վարդապետը ուզում էր հասարակ միջնակարգ դպրոց բանալ, առանց մասնագիտական բաժինների, միայն ուսումնական մասով, այդ էլ աւելորդ է, քանի որ նոյն այդ ծրագրով դպրոց այժմ ունի Թաւրիզը: Փոխանակ 30 հազար ռուբլի տալու մի նոր չէնքի, կարելի էր աւելացնել եղած դպրոցների դրամագլուխ վրայ, բարձրացնել այդ դպրոցներին մէկը, կազմել լաւ ուսուցչական խումբ, ոյժ տալ նրան՝ կրճատելով միւս դպրոցի բարձր դասարանները. մանաւանդ Թամարեան դպրոցի չէնքը շատ յարմար է դրա համար: Այժմ միմիայն կայ Կենտրոնական դպրոցի չէնքը, ուրիշ ոչինչ:

Կենտրոնական դպրոցը դարձել էր նրա համար ուղղակի մի ցաւ, բռնել էր դրանից, երևակայութեան մէջ փայլուն կերպով կազմակերպում էր և աջուձախ հարուածում, ցեխ էր չարտում երկու դպրոցների հասցէին. առանց գէթ մի անգամ Լիլաւայի դպրոցը աչցելելու և մօտիկ ճանաչելու, նա նոյնիսկ մամուլի մէջ գրեց բացասական բաներ, իհարկէ յենուելով դրսում պըտտած «ասէ-կօսէները» և բամբասանքների վրայ: Մինչդեռ նշանակութիւն չ'ունի նրա այս ձեռքի թէ դրական և թէ բացասական կարծիքը, որովհետեւ հաստատուն չէ, երբեմն և փոփոխական է. եւ գիտէք քանի անգամ նա կարծիքը փոխել է Լիլաւայի դպրոցների վերաբերմամբ: Ասացի, որ առաջ, դեռ գրեթէ չ'աչցելած դպրոցը, նա սկսեց աննպաստ խօսել և գրել. անցաւ մի քանի ամիս, նա ներկայ կղաւ մի փորձնական դասի, որ պարագում էր վեցերորդեցիկներից մէկը: Անմիջապէս յետոյ եղաւ փորձնական դասի քննադատութիւնը. ներկայ էին վեցերորդ դասատան բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և առաջնորդը: Եւ գիտէք ինչ կարծիք յայտնեց այնտեղ նա. նա խոստովանուեց, որ իր առաջ նստած են ոչ թէ պատանիներ, խելքով տհասներ, այլ պատրաստուած և հասուն երիտասարդներ, և ուրախութիւն յայտնեց, որ դրանք են ամբողջ Պարսկաստանի առաջին պտուղները, առաջին ընթացաւարտները:

Յափշտակուած իր երևակայական, չ'եղած Կենտր. դպրոցով, սկսեց հակառակ ընթացք բռնել եղած և իրական օգուտ տուող դպրոցների վերաբերմամբ: Եւ նա որոշ չափով հասաւ իր նպա-

տակին: Լիլաւայի դպրոցը տապալեց, ուսուցչական խումբը ցրեց: Բնորոշ է նրա գործելու մի սխառմը. այս կամ այն անձնաւորութեան հեռացնելու, չեղարացնելու համար նա հրնարում, առաջ է բերում մի «նոր օրէնք», մի նոր կարգադրութիւն: Ուսուցիչների առաջ հռչակաբանական ընտրողական ժողովները փակելու համար նա դեռ չը հրատարակուած և ժողովրդի սեփականութիւնը չը դարձած կանոնադրութիւնից յայտարարեց ժողովրդին, որ «այս խնդրում շահ ունեցող և շահագրգռուած անձինք ձայնի իրաւունքից զրկուած են»: Որոշ մարդկանց առաջն առնելու համար նա «պտղի» հարցը մէջ նետեց, մի բան, որ էլի չի տեսել Թաւրիզը. վերջապէս առանձին-առանձին հրաւերներով մարդկանց կանչեց ժողովի և տունը մէկին էր հրաւէր ուղարկել, այն ինչ կանոնադրութեան մէջ պարզ կերպով ասուած է, որ ամեն մի անձնաւորութիւն կարող է մասնակցել, եթէ 21 տարեքից անց է: Իսկ այդ չի արել անչուշտ, որովհետեւ նրան ձեռնառու չէր:

Այստեղ չենք ուզում նկարագրել այն խայտառակութիւնները, որ տեղի ունեցան նոր ակտուէներ փնտրելիս: Մենք ամաչում ենք... որ հակառակորդների դէմ կուելու համար առաջնորդը միջոցների մէջ խտրութիւն չի գնում: Առաջնորդ Մուրադեանը ընդհարում է Ղալայի դպրոցի ուսուցիչ պ. Ն. Տէր-Յովհաննիսեանի հետ, ընդհարում է, որովհետեւ վերջինս կանանց բարեգ. Միացեալ ընկերութեան կողմից ուղարկուած է Ուրմի մի գործ քննելու և յանկարծ առաջնորդին հակառակ եզրակացութեան է հասնում: Նրան արուած է եղել լիազօրութիւն այդ խնդրի վերաբերմամբ: Առաջնորդ Մուրադեանը զայրանում է, բարկանում է այդ ուսուցչի վրայ և առաջարկում է բարեգ. ընկ. վարչութեանը, որ պ. Տէր-Յովհաննիսեանին հեռացնէ քարտուղարութիւնից: Եւ վարչութիւնը այնքան թոյլ, այնքան անհեռատես և անարդար է գտնւում, որ կատարում է առաջնորդի քմահաճօքը և միանգամայն ապօրինի պահանջը: Ապա հերթը հասնում է և դպրոցից հեռացնելուն...

Նրա տեղեղ սովորութիւններից մէկն էլ այն է, որ եկեղեցու բնմը դարձնում է հայհոյանքների և հակաճառութեան վայր: Կարանում դասախօսութիւն է լինում, ներկայ է և առաջնորդը. փոխանակ այնտեղ յայտնելու իր կարծիքը և հակաճառելու, ուր յարմարութիւն կ'ունենան պաշտպանուելու և հակառակորդները, նա քարոզի նիւթ է չինում և յարձակւում է սրա-նրա վրայ, իսկ դիմացինը հնարաւորութիւն չի ունենում պատասխանելու:

Ահա այսպէս անմխիթար է ներկայ առաջնորդի երկու տա-
րուայ զործունէութիւնը:

Սպասենք և տեսնենք ինչ կը լինի նա ապագայում...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ